Դոհայի միջադեպը թուրք-իսրայելական դիմակայության համատեքստում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 19.09.2025 թ.[1]

Սեղմագիր

ԱՌՎԱԿ կենտրոնն անդրադառնում է 2025 թ. սեպտեմբերի 9-ին Դոհայում իսրայելական օդային հարվածի հետ կապված միջադեպին՝ թուրք-իսրայելական դիմակայության սրվելու համատեքստում: Վերլուծված են հարձակման հետևանքները միջազգային իրավունքի համար, Կատարի՝ որպես միջնորդի վարկանիշը, ինչպես նաև ԱՄՆ-ի և Իսրայելի հակասական հայտարարությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում թուրքական MIT հետախուզական ծառայության դերին Դոհայում ՀԱՄԱՍ-ի առաջնորդների ոչնչացման գործողությունը խափանելու գործում, ինչը, ըստ ԱՌՎԱԿ-ի, վկայում է այն մասին, որ Թուրքիայի և Իսրայելի միջև ռազմաքաղաքական մրցակցությունը նոր մակարդակի է հասել: Ընդգծվում է, որ Անկարան «Պաղեստինի դիմադրությունն» օգտագործում է որպես արտաքին քաղաքական ակտիվ՝ Իսրայելի և ԱՄՆ-ի վրա ճնշումը մեծացնելու համար, ինչը կարող է հանգեցնել տարածաշրջանային հակամարտության հետագա ծավալման:

Բանալի բառեր. *Իսրայել, Թուրքիա, Կատար, ՀԱՄԱՍ, Մերձավոր Արևելք, հակամարտություն, միջազգային իրավունք, աշխարհաքաղաքականություն, հետախուզություն:*

2025 թվականի սեպտեմբերի 9-ին Դոհային Իսրայելի օդային հարվածը ևս մեկ անգամ ցույց տվեց միջազգային իրավունքի խորը ճգնաժամի առկայությունը և, մի շարք փորձագետների կարծիքով, այդ ինստիտուտի բացարձակ վատթարացումը:

Կատարն արաբական երկիր է, որն պատերազմող կողմերի միջև երկխոսության միջոցով Գազայի ճգնաժամը լուծելու համար ավելի շատ ջանքեր է գործադրել, քան տարածաշրջանի ցանկացած այլ երկիր: Հակամարտությունների կարգավորման միջազգային պրակտիկայում բանակցող միջնորդի կարգավիճակը հարանման է «*սուրբ կով*» հասկացությանը, և Թել Ավիվի՝ Դոհայի դեմ վերջին գործողությունը, մի երկրի, որը հարթակ ստեղծեց ՀԱՄԱՍ-ի ղեկավարության և հրեական պետության շահերը ներկայացնող ամերիկյան բանակցային թիմի միջև շփումների համար, դժվար է չդիտարկել որպես ոտնձգություն միջազգային օրենքի բոլոր հիմնարար նորմերի և քաղաքական-դիվանագիտական ավանդույթների հանդեպ:

Ինչպես հայտնի է, Դոհայում շենքի վրա կատարված հարձակումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ ՀԱՄԱՍ-ի ղեկավարությունը պետք է հավաքվեր այնտեղ՝ քննարկելու համար Գազայում հրադադարի և իսրայելցի պատանդների ազատ արձակման վերաբերյալ ԱՄՆ-ի ներկայացրած առաջարկների վերջին փաթեթը: Իսրայելը չէր կարող չհասկանալ, որ այս ռազմագործողությունը հերթական հարվածն է միջազգային իրավունքի նորմերը պարբերաբար անտեսող հրեական պետության վարկանիշին: Ուստի, հավանաբար, հենց Թել Ավիվն է, որ իրեն ապահովագրելու համար իրականացրել է տեղեկատվական արտահոսք Դոհայի հետ այս հարձակումը համաձայնեցնելու մասին:

[1] Մեկնաբանության բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքում 14.09.2025-ին:

Իբր թե Կատարի իշխանությունները նախապես տեղեկացված էին ու դեմ չէին իրենց տարածքում «*ծայրահեղականների*» ոչնչացման գործողությանը և հենց այդ պատճառով է, որ երկրի հակաօդային պաշտպանության համակարգը որևէ միջոց չի ձեռնարկել օդային հարվածը հետ մղելու համար:

Այնուամենայնիվ, այս վարկածը բավականին կասկածելի է թվում, քանի որ դա որևէ կերպ չի բացատրում հուսալի միջնորդի և կողմերի միջև «*արդար խաղաղության*» գլխավոր շահագրգիռ կողմի սեփական վարկանիշը վարկաբեկելու Դոհայի դրդապատճառը: Իսլամական ավանդականությունը, որի կրողներից մեկը Կատարում Ալ Տանիի էմիրների իշխող դինաստիան է, լրջորեն է ընդունում այն կանխադրույթը, ըստ որի անթույլատրելի է հյուրընկալող տանը հաշվեհարդար տեսնել նեղացնողների նկատմամբ: Տվյալ դեպքում Կատարն ապաստան է տրամադրել պաղեստինցի որոշ առաջնորդների, նպաստել ԱՄՆ–Իսրայել երկյակի հետ նրանց երկխոսության հաստատմանը, և կասկածելի է թվում, որ կատարվածից հետո Դոհան Վաշինգտոնի և Թել Ավիվի հետ պայմանավորվի *«իր տանիքի տակ»* հյուրերի նկատմամբ փաստացի հաշվեհարդար տեսնելու մասին:

Al Jazeera-ի հաղորդագրության համաձայն՝ Կատարի վարչապետ Շեյխ Մուհամմեդ բեն Աբդուլռահման բեն Ջասիմ Ալ Տանին արտահայտվել է հենց այս իմաստով՝ հայտարարելով, թե «*բանակցողներին սպանելու փորձը մի երկրում, որը նույնպես մասնակցում է հրադադարի շուրջ բանակցություններին, էթիկական չէ և ուխտադրուժ է*»: Նա Իսրայելի գործողությունները բնութագրել է ամենակոշտ արտահայտություններով՝ հարձակումը գնահատելով որպես ոտնձգություն Կատարի ինքնիշխանության նկատմամբ և «*պետական ահաբեկչության*» ակտ:

Ակնհայտ է, որ Կատարի իշխանություններին նախապես չեն զգուշացրել հարձակման մասին՝ ի տարբերություն ամերիկացիների, որոնք ասում էին, թե հարվածների մասին տեղյակ են եղել միայն հրթիռների արձակումից հետո: Սակայն փորձագիտական հանրությունը թերահավատորեն է վերաբերվում նման հավաստիացումներին: Բանն այն է, որ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ամենամեծ ռազմակայանը գտնվում է Կատարում: ՀՕՊ և հակահրթիռային պաշտպանության համակարգերը, ինչպես նաև Հորդանանում և Սաուդյան Արաբիայում դիտարկման և հետևելու օբյեկտները չէին կարող չպատասխանել «*հանկարծակի*» գրոհին, եթե ամերիկյան հրամանատարությունը նախապես տեղեկացված չլիներ իսրայելական կործանիչների գրոհների թիրախների և կոորդինատների մասին: ԱՄՆ-ը գիտեր հարձակման մասին և, ինչպես կարծում են շատ վերլուծաբաններ, կարող էր մասնակցել դրա նախապատրաստմանը:

Այս համապատկերում տեղի ունեցածի վերաբերյալ Դոնալդ Թրամփի հակասական հայտարարությունները տարօրինակ են հնչում: Կատարի միապետի պաշտոնական կայքի փոխանցմամբ՝ երկրի էմիր շեյխ Տոմիմ բեն Համադ Ալ Տանիի հետ հեռախոսազրույցում ԱՄՆ նախագահը «*խստորեն դատապարտել է*» ոտնձգությունն էմիրության

ինքնիշխանության հանդեպ և համերաշխություն հայտնել Դոհային: Այնուամենայնիվ, Բենիամին Նեթանյահուի հետ հեռախոսազրույցում նա որոշ չափով փոխել է կատարվածի վերաբերյալ իր դատողությունների շեշտադրումն ու տրամաբանությունը: Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լևիտի համաձայն, նախագահն Իսրայելի վարչապետին նախազգուշացրել է ԱՄՆ հուսալի դաշնակցի՝ Կատարի տարածքին միակողմանի հարվածներ հասցնելուց, սակայն դրա հետ մեկտեղ կարծիք է հայտնել, որ «*Գազայի բնակիչների փառապանքից օգուտ քաղած ՀԱՄԱՍ-ի վերացումն արժանի նպատակ է*»: Այս մեջբերումը զարմացրեց շատ փորձագետների և քաղաքական գործիչների՝ հաշվի առնելով այն փաստը, որ հենց ամերիկացի դիվանագետներն էին Կատարի իշխանությունների հետ միասին Դոհայում ակտիվորեն աշխատում պաղեստինա-իսրայելական խնդիրը կառուցողական բանակցային ուղի դուրս բերելու համար: Դրանով իսկ Դ. Թրամփը խաչ քաշեց ամերիկյան բանակցային խմբի ջանքերի վրա՝ իր դիվանագետներին դնելով չափազանց բարդ կացության մեջ:

Իրենց հերթին, Իսրայելի իշխանությունները նույնպես հակասական հայտարարություններ են արել՝ ըստ երևույթին չակնկալելով, որ հարձակումը նման բացասական հնչեղություն կառաջացնի միջազգային ասպարեզում: Դեպքից անմիջապես հետո վարչապետ Բ. Նեթանյահուն և պաշտպանության նախարար Ի. Կացը տարածել են համատեղ հայտարարություն, որի մեջ հայտարարել են, թե Դոհայում ՀԱՄԱՍ-ի ղեկավարությանը վերացնելու որոշումն իբր կայացվել է 2025 թ. սեպտեմբերի 8-ին Երուսաղեմում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո, որի հետևանքով 6 մարդ է զոհվել: Սակայն, ըստ պետական բանակային *«Գալեյ ՑԱԽԱԼ»* ռադիոկայանի, *«Հրե գագաթնաժողով»* (ըստ մեկ այլ վարկածի՝ *«Հրո գագաթնակետ»)* ռազմագործողությունը նախատեսված էր ամիսներ առաջ: Այսպես, Իսրայելի պաշտպանության բանակի մամուլի խոսնակը խոստովանեց, որ Երուսաղեմում հարձակումը, ինչպես նաև նույն օրը Գազայում Իսրայելի ՑԱԽԱԼ-ի 4 զինծառայողների զոհվելը պարզապես պատրվակ էին վաղուց ծրագրված գործողությունն իրականացնելու համար: Սա փոխում է իրավիճակը Գազայի հատվածի բանակցությունների ապագայի շուրջ՝ զգալիորեն թուլացնելով Իսրայելի դիրքերը, որը հույս ուներ այլ արդյունքի հասնել:

Մի շարք փորձագետների կարծիքով, Իսրայելը նման արմատական միջոցի է դիմել՝ ելնելով այն փաստից, որ Դոհայում հավաքվել են ՀԱՄԱՍ-ի ամենաարմատական գործիչները՝ Խալիլ ալ-Հայայի և Զահեր Ջաբարինի գլխավորությամբ, ովքեր դեմ են իսրայելցիների հետ փոխզիջումներին և չեն ցանկանում ազատել իսրայելցի պատանդներին՝ առանց Թել Ավիվի էական զիջումների: Այս հիմքով ՀԱՄԱՍ-ի ղեկավարության մեջ նույնիսկ հասունացել է հակամարտություն, քանի որ կազմակերպության ղեկավարությունից շատ այլ առանցքային դեմքեր հակված են ընդունելու ամերիկացիների և կատարցիների միջոցով փոխանցված իսրայելական

պայմանները: Մասնավորապես, «Գազա-Սիթի» բրիգադի հրամանատար Իզ ադ-Դին ալ-Խադդամը դեմ է արտահայտվել Խալիլ ալ-Հայայի անզիջողականությանը՝ կարծելով, որ թուլացած ՀԱՄԱՍ-ն ստիպված է ընդունել Իսրայելի պայմանները: Դոհայի վրա իսրայելական օդուժի հարձակման նպատակն էր վերացնել ալ-Հայիին և նրա զինակիցներին, որպեսզի կազմակերպությունում դեպի ամենաբարձր պաշտոններ տանելու ճանապարհը մաքրվի ավելի զիջողական գործիչների համար, ովքեր պատրաստ էին ընդունել Թել Ավիվի առաջարկները:

Սակայն ավելի ուշ պարզ դարձավ, որ իսրայելական ռազմական և հետախուզական ծառայությունների վրա դրված առաջադրանքն ամբողջությամբ չի կատարվել, մինչդեռ հարձակման արձագանքն զգալի վնաս է հասցրել Իսրայելի շահերին: Դոհայի վրա հարձակումից ընդամենը մի քանի ժամ անց հայտնի դարձավ, որ ՀԱՄԱՍ-ի ղեկավարության արմատականների թվից առանցքային դեմքերը ողջ են մնացել: Այս կազմակերպության տեղեկատվական ծառայությունը հայտարարել է, որ հարձակման հետևանքով զոհվել է ընդհանուր առմամբ 6 մարդ, այդ թվում՝ Խալիլ ալ-Հայայի որդին՝ Համամ Խալիլը և նրա գրասենյակի ղեկավար Ջիհադ Լաբեդը: Սա նշանակում է, որ բանակցությունների միջոցով պատանդներին փրկելու Թել Ավիվի հնարավորությունները զգալիորեն նվազել են: Դժվար թե սրանից հետո ՀԱՄԱՍ-ի ղեկավարությունը, որն առանց այդ էլ չի վստահում Իսրայելին, մեղմի իր դիրքորոշումը կամ նույնիսկ շարունակի անուղղակի շփումը Թել Ավիվի հետ: Փորձագետների կարծիքով, պետք է ակնկալել, որ Դոհան ինքն առնվազն մի քանի ամսով կսահմանափակի իր միջնորդական գործունեությունը, ինչն էլ ավելի կսրի իրավիճակը բանակցային օրակարգի շուրջ:

Իսրայելում արդեն զգուշավոր քննարկումներ են ընթանում այն մասին, թե, արդյոք, պե՞տք է ձախողված համարել հարձակումը Կատարի մայրաքաղաքում: Երկրի պաշտոնյաները փորձում են փարատել նման տրամադրությունները, սակայն նրանց փաստարկները հետզհետե ավելի կասկածելի են դառնում: Օրինակ, ԱՄՆ-ում Իսրայելի դեսպան Յեխիել Լեյթերը *Fox News*-ին տված հարցազրույցում հայտարարել է, թե Իսրայելը հուսով է, որ Դոհային հասցված հարվածները կնպաստեն Գազայի հատվածում հրադադարի դադարեցմանը և խաղաղության հաստատմանը: ՀԱՄԱՍ-ի հայտարարությունների համապատկերում, այն մասին, թե՝ Իսրայելը ևս մեկ անգամ ցույց տվեց իր նենգությունն ու բանակցելու անկարողությունը, ուստի, հետևաբար, պետք է խոսել միայն ուժի լեզվով, դեսպանի խոսքերը լավատեսություն չեն ներշնչում: Նույն հարցազրույցում դեսպան Լեյթերը փորձել է հերքել Իսրայելի ձախողումը, ընդգծելով, որ Դոհային հասցված հարվածը նախազգուշացում էր, հավելելով, որ եթե Իսրայելն «*այս անգամ չհասավ ՀԱՄԱՍ-ի վերնախավին, ապա հաջորդ անգամ կհասնի*»:

Ակնհայտ է, որ Գազայի դիմադրության արմատական առաջնորդներին վերացնելու վերջին գործողությունը, եթե ոչ լիակատար ձախողում էր, ապա լրջորեն ազդեց Թել Ավիվի

ծրագրերի վրա: Փաստն այն է, որ Իսրայելը բախվում է Գազայի դիմադրության առանցքային անդամներին հետախուզելու և վերացնելու հրեական պետության ծրագրերին Թուրքիայի միջամտության խնդրին: Այսպիսով, ըստ *The Wall Street Journal*-ի և *Turkiye թերթի* տեղեկությունների, հենց թուրքական հետախուզությունն է խափանել պաղեստինյան կազմակերպության ղեկավարներին ոչնչացնելու Իսրայելի գործողությունը: Այս տեղեկությունների համաձայն՝ Դոհայի վրա հարձակումից մի քանի շաբաթ առաջ թուրքական *MIT* հետախուզությունը Եգիպտոսի հատուկ ծառայությունների հետ մեկտեղ պաղեստինցիներին տեղեկացրել է ծրագրված ռազմագործողության մասին: Թուրքական կողմը նաև պարբերաբար պաղեստինցիներին և, հավանաբար, Կատարի իշխանություններին է տրամադրել իր ռադարների տվյալները Մերձավոր Արևելքի օդային տարածքում իսրայելական մարտական ինքնաթիռների տեղաշարժի մասին, ինչն, ի վերջո, հնարավորություն է տվել արագ միջոցներ ձեռնարկել Դոհայում ՀԱՄԱՍ-ի պատվիրակության անվտանգությունն ապահովելու համար: Սա շատ լուրջ ազդանշան է Իսրայելին, որ Թուրքիայի հետ ռազմաքաղաքական մրցակցությունը նոր հարթություն է մտել, և Անկարան, ի պատասխան սիրիական ուղղությամբ «*թշնամական*» Թել Ավիվի գործողությունների, արդեն իսկ ավելի գործուն քայլեր է անում Իսրայելի համար ցավոտ պաղեստինյան հարցում:

Թուրքիան մշտապես որոշակի ազդեցություն է ունեցել ՀԱՄԱՍ-ի և, ընդհանուր առմամբ, Պաղեստինի դիմադրության վրա, սակայն մինչ վերջերս նա ստիպված էր մի շարք նշանակալից արաբական երկրների և Իրանի հետ կիսել այն: Սակայն Թել Ավիվի հետ հարաբերությունների պատճառով Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) պառակտումից, ինչպես նաև Սիրիայում և Լիբանանում Իրանի դիրքերի կորստից հետո թուրքական ազդեցությունն սկսեց արագորեն աճել: ՀԱՄԱՍ-ն արտաքին հովանավորության խիստ պակաս էր զգում, և նրա նկատմամբ խնամակալությունն ուժեղացնելու հնարավորությունը լիովին համապատասխանում էր Անկարայի մտադրություններին՝ լրացուցիչ ռազմաքաղաքական տեղ զբաղեցնելու տարածաշրջանում հրեական պետության հարաճուն գերիշխանությունը զսպելու համար: Մինչ վերջերս ՀԱՄԱՍ-ը հիմնականում ֆինանսավորվում էր Թուրքիայի միջոցով: Այս կազմակերպության և իսլամական աշխարհից նրա գործընկերների միջև հաղորդակցությունը կազմակերպվել է թուրքական տարածքում, և դիմադրության անցանկալի շատ ներկայացուցիչներ ապաստան են գտել Թուրքիայում: Ի հաստատումն ասվածի, ըստ ամերիկյան *Axios* տեղեկատվական պարբերականի, ՀԱՄԱՍ-ի որոշ առաջնորդներ Գազայի վերաբերյալ ամերիկյան առաջարկները քննարկելու համար Կատար են ժամանել Թուրքիայից: Այս ամենը վկայում է Անկարայի ցանկության մասին՝ «*պաղեստինյան դիմադրությունը*» վերածել իր արտաքին քաղաքական ակտիվի և այն օգտագործել Իսրայելի և, նրա միջոցով, ԱՄՆ-ի վրա ճնշումը մեծացնելու համար:

Նման միտումներ վերջին տարիներս պարբերաբար նկատվում են ողջ Մերձավոր Արևելքում, սակայն Կատարում նախատեսված ռազմագործողության ծրագրերին թուրքական հատուկ ծառայությունների միջամտության մասին տեղեկատվության արտահոսքը ցույց է տալիս, որ թուրք-իսրայելական առճակատումը նոր մակարդակի է հասնում և նոր չափումներ է ստանում: Թուրքիան առաջին անգամ լրջորեն մարտահրավեր է նետում Իսրայելին ոչ թե Ռ. Թ. Էրդողանի կոշտ հռետորաբանության ձևաչափով, այլ գործնական քայլերով, որոնք խափանել են թշնամական ուժերի առաջնորդներին ողջ տարածաշրջանում վերացնելու նախկինում հաջողված ռազմավարությունը: Սա գուցե ամենանշանակալիցը չէ, սակայն Անկարայի համար, այնուամենայնիվ, շոշափելի հաջողություն է:

Միաժամանակ, Թուրքիայում աճում է անհանգստությունը Բ. Նեթանյահուի աջ արմատական կառավարության հետագա գործողությունների առնչությամբ, որն, ինչպես ցույց տվեցին վերջին տարիների իրադարձությունները, ընդունակ է հանդուգն և անսպասելի քայլերի: Թուրքիայում՝ *MIT*-ի թևի տակ ՀԱՄԱՍ-ի անդամների կենտրոնացումը և թուրքական իշխանությունների հետ նրանց արդեն իսկ ապացուցված արդյունավետ փոխգործակցությունը կարող են Իսրայելին առիթ տալ ԱՄՆ-ից քարտ-բլանշ պահանջելու Անկարայի դեմ ավելի վճռական գործողությունների համար: Փորձագետների կարծիքով, Իսրայելը Թուրքիայի նկատմամբ նման նախաձեռնության լայն հնարավորություններ ունի, և դա չի նշանակում անպայման ռազմական հարձակում Թուրքիայում ՀԱՄԱՍ-ի անդամների վրա, ինչպես արդեն դա տեղի է ունեցել Թեհրանում և Դոհայում:

Ամեն դեպքում, տարածաշրջանում Թել Ավիվի և Անկարայի մրցակցությունն ակնհայտորեն անցնում է կոշտ դիմակայության փուլ տարածաշրջանային աշխարհաքաղաքական օրակարգի բոլոր ոլորտներում: